

Ինչպես կարելի է կիրառել «Քան» ակադեմիան հեռահար կրթության նպատակով, երբ դպրոցները ժամանակավորապես փակ են

Ողջուն, սիրելի ծնողներ և ուսուցիչներ,

Մենք տեղյակ ենք, որ Կորոնավիրուսի (COVID-19) վերջին զարգացումների հետ կապված, շատերդ մտահոգված եք՝ ինչպես ապահովել երեխաների կրթության շարունակականությունը, քանի դեռ դպրոցները ժամանակավորապես փակ են: Բոլորիս համար էլ կարևոր է մեր երեխաների առողջությունն ու խնամքը, միևնույն ժամանակ նրանց կրթությունն ու զբաղվածությունը:

Մենք ցանկանում ենք ամեն կերպ աջակցել ձեզ այս հարցում: Հանդիսանալով շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ մենք տրամադրում ենք առցանց, անվճար հայալեզու կրթական ռեսուրսներ բոլոր տարիքի երեխաների և ուսուցիչների համար:

Ստորև ներկայացնում ենք ամփոփ ուղեցույց՝ հարթակն արդյունավետ կիրառելու համար.

Ծնողներին

- [Ինչպես կարող են ծնողները կիրառել հարթակը](#)
- Առաջիկայում նախատեսում ենք ունենալ այս հարցերի շուրջ հատուկ վեբինար ծնողների համար: Հետևեք մեր [ֆեյսբուքյան էջին](#)՝ մանրամասները իմանալու համար:

Ուսուցիչներ

- [Անվճար ուղեցույցեր ուսուցիչների համար](#)
- Ուսուցիչների համար առաջիկայում նախատեսում ենք ունենալ հատուկ վեբինար-հանդիպում: Հետևեք մեր [ֆեյսբուքյան էջին](#)՝ մանրամասները իմանալու համար:

«Քան» ակադեմիան տրամադրում է անվճար կրթական ռեսուրսներ սովորողների, ուսուցիչների և ծնողների համար

Ի՞նչ է «Քան» ակադեմիան: Մեր կայքում կարող եք գտնել **տեսանյութեր, վարժություններ, հոդվածներ, թեստեր**, որոնց օգնությամբ աշակերտները կարող են

պարապել և ամրապնդել իրենց գիտելիքները, ինչպես նաև կարող են սովորել կամ վերանայել տարբեր թեմաներ:

- «Քան» ակադեմիայի հայերեն կայքում ներկայումս կարող եք գտնել [մաթեմատիկայի](#)ց բազմաթիվ նյութեր՝ նախադպրոցական տարիքի երեխաներից մինչև ավագ դպրոցի աշակերտների համար (նաև շարված՝ ըստ դասարանների): Ինչպես նաև կարող եք գտնել նյութեր [արվեստի պատմությունից](#), [երաժշտությունից](#), [անգլերենից](#) և [ձեռնարկատիրությունից](#):
- Բոլոր տեսանյութերը կարող եք գտնել նաև մեր [յութուբյան էջում](#):
- Աշակերտները կարող են ամրապնդել իրենց գիտելիքները վարժությունների, թեստերի միջոցով՝ ստանալով անմիջական արձագանք և օգնություն իրենց իսկ լուծած վարժությունների վերաբերյալ:
- Այն աշակերտները, ովքեր չունեն «Քան» ակադեմիայի կայքին հասանելիություն համակարգիչներով, կարող են օգտվել «Քան» ակադեմիայի հավելվածից սմարթ հեռախոսների միջոցով:
[Google play](#)
[Apple Store](#)

Ուսուցիչները կարող են ստեղծել առցանց դասարան, ներգրավել աշակերտներին, տալ հանձնարարություններ և ստանալ հաշվետվություններ՝ երեխաների առաջադիմության վերաբերյալ:

- Առցանց հարթակում անվճար գրանցվելուց հետո ուսուցիչները կարող են ստեղծել առցանց դասարան, որտեղ երեխաները հեշտությամբ կարող են ներգրավվել կողի միջոցով: Մանրամասներն՝ [այստեղ](#):
- Ուսուցիչները հեշտությամբ կարող են աշակերտներին հանձնարարել նոր թեմայից բոլոր վարժություններն ու թեստերը՝ ընտրելով համապատասխան հմտությունը կամ բաժինը, օրինակ՝ հանրահաշիվ կամ թվաբանություն կամ առանձին որևէ բաժնի վարժություն կամ տեսանյութ:
- Ուսուցիչները հաշվետվությունների միջոցով կարող են հեշտությամբ հետևել աշակերտների գործողություններին և առաջադիմությանը:

Ինչպես սկսել

1. Ստեղծիր անվճար հաշիվ մեր հիմնական [էջում](#):
2. Ծանոթացիր մեր անվճար նյութերին՝ «Դասընթացներ» բաժնում:
3. Ստեղծիր քո առցանց դասարանը և հարթակն անմիջապես քեզ կուղղորդի, թե ինչպես ներգրավել աշակերտներին և կառավարել այն:

Էլի հարցեր ունե՞ս: Գրիր մեր [ֆեյսբուքյան էջին](#):

«Khan Academy Kids» նախադպրոցական տարիքի սովորողների համար

Եթե նախադպրոցական տարիքի (2-7 տարեկան) երեխա ունես, ապա խորհուրդ ենք տալիս օգտվել մեր անձվար հավելվածից՝ «Khan Academy Kids». հավելվածը հասանելի է միայն անգլերենով: Այստեղ երեխան կարող է ձեռք բերել գրագիտության, ընթերցանության, գրելու, անգլերենի և մաթեմատիկայի հմտություններ, ինչպես նաև կարող է սովորել ստեղծարարության և սոցիալ-էմոցիոնալ հմտություններ: Այն 100% անվճար է, առանց գովազդների: «Khan Academy Kids»-ը հասանելի է iTunes-ով, Google Play-ով և Amazon App Store-ով:

«Քան» ակադեմիան շահույթ չհետապնդող կազմակերպություն է

Մենք նպատակ ունենք ապահովելու անվճար, միջազգային որակի կրթություն բոլորի համար, ամենուրեք: Մենք ուշիուշով հետևում ենք COVID-19-ի տարածմանը և պատրաստ ենք օգնելու բոլոր համայքներին, ովքեր մեր օգնության կարիքն ունեն: Հետևեք մեր նորություններին առաջիկա օրերին և շաբաթներին:

Հարգանքով՝

«Քան» ակադեմիայի հայաստանյան թիմ